ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 7

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

24 մարտ 2021թ. **Ք. ԻՋԵՎԱՆ**

Նիստին ներկա էին խորհրդի բոլոր անդամները։

ՕՐԱԿԱՐԳ

1. Հաղորդում ավարտական աշխատանքների կատարման ընթացքի մասին։ (Զեկ. Մ. Օ. Ստեփանյան)

2. Ավարտական աշխատանքների նախապաշտպանությունների և պաշտպանությունների ժամանակացույցների հաստատում: (Զեկ. Վ. Ա. Աղաբաբյան)

3. Հաղորդում ավարտական կուրսերի քննաշրջանի կազմակերպման վերաբերյալ և քննաշրջանի գրաֆիկի հաստատում։ (Զեկ. Վ. Ա. Աղաբաբյան)

4. Հաղորդում 2-րդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների մասին։ (Զեկ. Վ. Ա. Աղաբաբյան)

5. Կրթական ծրագրերի վերանայման աշխատանքային խմբերի կողմից իրականացված աշխատանքների ներկայացում։ (Զեկ. ԿԾ ղեկավարներ)

6. Ընթացիկ հարցեր։

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի պաշտոնակատար, խորհրդի նախագահ Վ. Ա. Աղաբաբյանը: Նա ներկաներին տեղեկացրեց, որ հերթական նիստում նախատեսված է 5 զեկուցվող հարց՝ համաձայն ֆակուլտետի խորհրդի հաստատված աշխատանքային պլանի։ Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը։

ԼՍԵՑԻՆ .

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ հանդես եկավ Դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի ամբիոնի վարիչի պաշտոնակատար Մ. Օ. Ստեփանյանը: Զեկուցողը ներկայացրեց ավարտական աշխատանքների կատարման ընթացքը, ամբիոնում կատարված քննարկումների արդյունքները: Նա նշեց, որ ավարտական աշխատանքների կատարման գործընթացը սկսվել է 2020-2021 ուստարվա սեպտեմբերից: Յուրաքանչյուր ղեկավար ամսվա մեջ որոշակի գրաֆիկով կոնսուլտացիոն հանդիպումներ է ունենում ուսանողների հետ: Զեկուցողը նշեց, որ տվյալ պահին ուսանողների մեծ մասի նախագծային աշխատանքները ավարտված են և ուսանողների մեծամասնությունը պաշտպանության ժամանակ ներկայացնելու է նյութով աշխատանք և ունեն մտահոգություններ ավարտական աշխատանքների անհրաժեշտ նյութերի ձեռք բերման հարցի վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ .

Տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը նշեց, որ տնօրենությունը պատրաստ է անհրաժեշտ նյութերի համար գումար տրամադրել, եթե լինի հստակ հիմնավորում:

ՈՐՈՇԵՑԻՆ .

1. Ավարտական աշխատանքների կատարման ընթացքը համարել բավարար:

2. Ներկայացնել ավարտական աշխատանքների համար անհրաժեշտ նյութերի ցանկը:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ հանդես եկավ խորհրդի նախագահ Վ. Աղաբաբյանը: Զեկուցողը ներկայացրեց ավարտական աշխատանքների նախապաշտպանությունների և պաշտպանությունների ժամանակացույցների հաստատման կարգը: Նշվեց, որ հանձնաժողովի նախագահին է

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի դոցենտ, ՀՀ Դիզայներների միության, Դիզայներների միության միջազգային ասոցացիայի անդամ Վահագ Լյովայի Պողոսյանը: Վ. Աղաբաբյանը նշեց, որ դիպլոմային աշխատանքների պաշտպանությունը, ըստ նախնական պայմանավորվածության, նախատեսվում է անցկացնել մայիսի 29-ին, բայց դեռևս հստակ չէ ZOOM հարթակում, թե առկա:

Զեկուցողը նշեց նաև, որ կարիք կա պաշտպանությունից առնվազը 2 շաբաթ առաջ մասնագիտական ամբիոնում կազմակերպել ավարտական աշխատանքների նախապաշտպանությունը, ինչը սահմանված է ավարտական աշխատանքների պատրաստման և գնահատման կարգով: Զեկուցողը առաջարկեց ապրիլին կազմակերպել ավարտական աշխատանքների դիտում-քննարկում՝ հաշվի առնելով կրթական ծրագրի առանձնահատկությունները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ք. Մխիթարյանը, Հ. Ասատրյանը, Ան. Չիբուխչյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

16. 04. 21թ. կազմակերպել ավարտական աշխատանքների նախնական դիտում-քննարկում, 07. 05. 21թ. ՝նախապաշտպանություն:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի երրորդ հարցի վերաբերյալ հանդես եկավ Վ. Աղաբաբյանը: Զեկուցողը ներկայացրեց ավարտական կուրսերի քննաշրջանի կազմակերպման ընթացքը, նշեց, որ քննությունները անցկացվելու են ZOOM հարթակում: Զեկուցողը ներկայացրեց, որ 2020-2021 ուստարվա 2-րդ կիսամյակի ավարտական կուրսի հանրագումարային քննությունները նախատեսվում է իրականացնել սահմանված կարգի համաձայն՝ նախօրոք կազմած ժամանակացույցով /ապրիլի 06-ից մինչև ապրիլի 10-ը/: Նա նշեց, որ ժամանակացույցը քննարկվել է նաև ուսանողների հետ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

Հ. Մխիթարյանը, Մ. Ստեփանյանը, Ք. Մխիթարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Ավարտական կուրսերի քննաշրջանի կազմակերպման ընթացքը գնահատել բավարար:

2. Հաստատել 2020-2021 ուստարվա երկրորդ կիսամյակի ավարտական կուրսերի քննաշրջանի գրաֆիկները:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի չորրորդ հարցի վերաբերյալ զեկուցեց Վ. Աղաբաբյանը: Զեկուցողը ներկայացրեց 2020-2021 ուստարվա 2-րդ կիսամյակի ընթացիկ քննությունների և ստուգումների կազմակերպման ընթացքը, նշեց, որ քննությունները անցկացվելու են ZOOM հարթակում: Զեկուցողը ներկայացրեց, որ 2020-2021 ուստարվա 2-րդ կիսամյակի ընթացիկ քննությունները և ստուգումները նախատեսվում են իրականացնել սահմանված կարգի համաձայն՝ նախօրոք կազմած ժամանակացույցով /ապրիլի 06-ից մինչև ապրիլի 10-ը/: Զեկուցողը նշեց, որ քննության օրերը քննարկվել են դասախոսական կազմի, ուսանողների հետ, մոտ մեկ ամիս փակցված են և առարկություններ չեն եղել:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Հ. Ասատրյան, Հ. Մխիթարյանը, Մ. Ստեփանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2020-2021 ուստարվա 2-րդ կիսամյակի ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքները համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի հինգերորդ հարցի վերաբերյալ զեկուցեց «Գծանկարի, գունանկարի և քանդակի›› կրթական ծրագրի ղեկավար Լ. Ֆլջյանը: Զեկուցողը ներկայացրեց կրթական ծրագրի վերանայման աշխատանքային խմբերի կողմից իրականացված աշխատանքները: Լ. Ֆլջյանը նշեց, որ ընդհանուր առմամբ կրթական ծրագիրը պատրաստ է 95%-ով: Զեկուցողը հայտնեց, որ նպատակահարմար է կրթական ծրագրի վերջնական տարբերակը ուղարկել արտաքին փորձաքննության:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Հ. Ասատրյան, Վ. Աղաբաբյան:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Կրթական ծրագրերի վերանայման աշխատանքային խմբերի կողմից իրականացված աշխատանքները համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգում որպես ընթացիկ հարց ներկայացվեց էթիկայի լիազոր ներկայացուցչի վերաբերյալ հաղորդում: Վ. Աղաբաբյանը ներկայացրեց, որ պետք է ընտրվի էթիկայի լիազոր ներկայացուցիչ, բայց պարտադիր չէ, որ ներկայացուցիչը լինի ֆակուլտետի աշխատակից: Կարևորը, որ նա հետևի բարեվարքության կանոններին, լինի համալսարանական, ունենա բարձր հեղինակություն և ակադեմիական ազնվություն: Զեկուցողը նշեց, որ ֆակուլտետի դասախոսական կազմի կողմից ինքնաառաջադրվող թեկնածուներ չեն եղել, ֆակուլտետը ևս չունի կոնկրետ թեկնածու և նպատակահարմար է հարցը կրկին քննարկել:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ան. Չիբուխչյանը, Մ. Ստեփանյանը, Հ. Ասատրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Սեղմ ժամկետում ամբիոններում քննարկել էթիկայի լիազոր ներկայացուցչի ընտրության հարցը:

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Վ. Ա. Աղաբաբյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ք. Հ. Մխիթարյան